



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՋՈՐԴ
ԹԻՈՂ`

ՈՒՐՐԱԹ. 18
ՅՈՒՆԻՍ 2003

«ԱՋԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ

ԹԻՈՂ 3 (15)

ՅՈՒՆԻՍ 2003

bezdig_mezdig@hotmail.com

ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԲԱՍԱԻ

Դարձեալ ամալերջի քննութիւն եւ ապա...
արձակուրդ:

Յուսանք, որ անցուցած ըլլաք, այնքան
լաւ քննութիւն մը, որուն շատ լաւ արդիւնքը
առիթ ստեղծէ, որ իւրաքանչիւր դասարանի
բոլոր աշակերտները միասնաբար դասարանի
բարձրանան:

Այս արձակուրդի նախօրեակին ձեզի հետ
պիտի բաժնեմ քանի մը մտածումներ: Ինձի
համար լաւ ու հանգիստ արձակուրդ անցը-
նելը աւելի դժուար է, քան դպրոցական հե-
քոտ օրերը՝ իրենց ճանր դասերով:

Թերեւս վրաս խնդաք, սակայն այդպէս է:
Միտքս աւելի յստակացնեմ: Արձակուրդ ան-
ցընելը դժուար է, որովհետեւ լաւ արձակուրդ
ունենալու համար ջանք պէտք է թափենք, որ
ամէն ինչ մենք ծրագրենք եւ, ինչո՛ւ չէ, մեր
ուպած ձեռով: Մինչդեռ դպրոցական օրերուն
ամէն ինչ ծրագրուած մեզի կը տրուի եւ մենք
միայն կը հետեւինք ու կը կատարենք:



Սալի Տօնապետեան, Ե. դաս. Ա. Գասարձեան

Եթէ ես իսկապէս կ'ուզեմ հանգիստ ար-
ձակուրդ անցընել աշխատանքները ամէն օր
կրկնելէ կը հրաժարիմ: Օրինակ՝ բնաւ չեմ
ուզեր շաբթուան եօթը օրերն ալ անցընել
համակարգիչին կամ հեռատեսիլին դիմաց
նստած: Կ'ուզեմ քիչ մըն ալ մօրս կամ հօրս
օգնել, քիչ մը մեր դրացիին փոքրիկին հոգ
տանիլ, հեռատեսիլէն «Արթ ըթթ» դիտելէ
ետք ձեռային աշխատանք կատարել, գիրք

կարդալ (նոյնիսկ եթէ ուսուցիչը չէ պատուի-
րած), դիւրին անուշեղէն պատրաստել, ըն-
կերներու հետ բացօթեայ խաղեր խաղալ,
անկար ձերուկի մը օգտակար դառնալ, գան-
ձանակիս մէջ պահած գումարով գեղեցիկ
երգերու ձայներով մը գնել եւ ունկնդրել...

Այս բոլորը ծրագրելն ու գործադրելը ար-
դէն իմ ձեռքս է: Կը մնայ պտոյտի պարա-
գան. այդ ալ կարելի է ատենը մէյ մը ճնող-
ներէն խնդրել, որ մեզի գիւղ կամ ճով տա-
նին, որպէսզի քննութիւնն ալ վայելենք:

Այս ձեռով կը կարծեմ լաւ արձակուրդ
կ'անցընենք, որովհետեւ եթէ այս բոլորը պի-
տի իրագործենք, ամրան երեք ամիսները
հազիւ պիտի բաւեն:

Իմա հասկցաք, թէ ինչո՛ւ դժուար է ար-
ձակուրդը լաւ անցընելը, որովհետեւ դուն եւ
ես նախ պիտի ծրագրենք, ապա նաեւ գոր-
ծադրենք:

Բարի՛ արձակուրդ:

ԱՃՈՒՍՏԱՆՔ, ՄՐՅՈՒՄ ԵՒ... ԱՐԴԻՒՆՔ



Մեզի հասած շարադրութիւններուն մէջ կային լաւեր ու շատ
լաւեր: Բնականաբար պէտք է ընտրութիւն կատարելնք եւ իւրա-
քանչիւր դասարանէ ընտրելնք երեք մրցանակակիր: Ահաւասիկ
լաւագոյն շարադրութիւնները գրած աշակերտներուն անունները.

4ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1.- Նաթալի Սագարեան (Ազգ. Ս. Խանամիրեան վրձ.)
- 2.- Դալար Պոյաձեան (համազգայինի Մ. եւ Բ. Արսլանեան
ճեմարան)
- 3.- Թալին Ռուբէնեան (Ազգ. Ս. Քառասնից Մանկանց վրձ.)

5ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1.- Ծողեր Յովհաննէսեան (համազգայինի Մ. եւ Բ. Արսլան-
եան ճեմարան)
- 2.- Ռիթա Վարդանեան (հայ Աւետ. Ծամլեան - Թաթիկեան վրձ.)
- 3.- Իրակ Փափազեան (համազգայինի Մ. եւ Բ. Արսլանեան
ճեմարան)

6ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

- 1.- Նունէ Սարգիսեան (Վահան Թէրթեան վրձ.)
- 2.- Ռուբէն Արապաշեան (հայ Աւետ. Կեդր. Բարձր. վրձ.)
- 3.- Նաթաշա Արապ Պաղչէձեան (համազգայինի Մ. եւ Բ.
Արսլանեան ճեմարան)

Ամրան արձակուրդէն առաջ աշակերտ եւ ուսուցիչ շատ աւելի
մեծ թափով աշխատանքի կը լծուին: Քննութիւններ, սրբագրու-
թիւններ ու վիճակացոյցներ կը սպասեն բոլորին:

Նոյնը պատահեցաւ նաեւ «Պատիկ - Մատիկ»ին հետ, երբ մեր
փոքրիկ ընթերցողները մեծ խանդավառութեամբ մասնակցեցան
«Եկէք շարադրենք» շարադրութեան մրցումին: Անոնք կիրակի, 1
Յունիսի առաւօտեան ժամը 10:00էն առաջ իսկ հասած էին
«Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահ, ուր տեղի ունեցաւ
մրցումը: Ծատ գնահատելի է բոլոր աշակերտներուն լրջութիւնը եւ
ժրջանութիւնը:



ԴՊՐՈՍՈՒԿԱՆ

ՄԻՋ -

«ՊՋՏԻԿ - ՄՋՏԻԿ»Ի «ԵԿԷՔ ԾԱՐԱԴՐԵՆՔ» ՄՐՑՈՒՄԸ

150 հԱՅ ԱՃԱԿԵՐՏՆԵՐ ՈՒՐԱՊՈՒԹԵԱՄԲ ԾԱՐԱԴՐԵՑԻՆ



Կիրակի, 1 Յունիսի առաւօտեան ժամը 9:30-էն սկսեալ շուրջ 150 աշակերտներ հաւաքուեցան «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահ: 4րդ, 5րդ, 6րդ դասարաններու այս աշակերտները եկան լիբանանահայ տասներեք դպրոցներէ (Ազգ. Ս. Քառասնից Մանկանց, Խէքէեան, Բայ Աւետ. Ծամբեան - Թաթիկեան, Բայ Կաթ. Մերոպեան, Ազգ. Արգարեան, Ազգ. Աքսոր Գասարճեան, Բամապալանի Ս. եւ Բ. Արսլանեան ճեմարան, Ազգ. Ս. Խանամիրեան, Ազգ. Եղիշէ Մանուկեան Բայ Կաթ. Ս. Ազնէս, Բ.Բ.Շ.Ս.ի Կարմիրեան, Բայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն եւ Բայ Կաթ. Ս. Խաչ վարժարանները):

Այս մեծ թիւով աշակերտները ուրախ եւ ինքնավստահ դէմքերով մասնակցեցան «Պլտիկ - Մվտիկ»ի «ԵԿԷՔ շարադրենք» մրցումին: Անոնք մեծ լրջութեամբ եւ կարգապահութեամբ նստան իրենց տեղերը եւ պատրաստուեցան մրցումին:

Իրաքանչիւր դասարանի տրուած էր երեք նիւթ, որոնցմէ շարադրողները ընտրեցին միայն մէկը: 4րդ դասարանի աշակերտները գրեցին մուկ ու կատուին հաշտութեան, իրենց ուլաճիւն պէս օր մը անընելու եւ կամ Բայաստան երեւակայութեամբ պտոյտի գացած Բրակին մասին: 5րդի աշակերտները ընտրեցին իրենց նախասիրած անասունը նկարագրելու, տկարացած Սիւփրոմէնին իր ուժը վերադարձնելու եւ հայոց պատմութեան հերոսներէն մէկուն հետ տեսնուելու մասին նիւթերէն մէկը: Իսկ 6րդ դասարանի աշակերտները գրեցին, թէ ո՞ր իրական կամ երեւակայական անասունը կ'ուզէին ըլլալ, կատարեցին իրենց գիւտը (առնուալն՝ թուղթի վրայ) եւ կամ նկարագրեցին, թէ ինչպէս պիտի ապրէին մեր ապատագրուած պատմական հողերուն վրայ:

Ծարադրութեան մրցումը սկսելէն առաջ

ոմանք քիչ մը կը վախնային, ուրիշներ մտահոգ էին, թէ ամէն ինչ լաւ պիտի ընթանայ: Սակայն մրցումին ընթացքին աշակերտներուն ինքնավստահ դէմքերէն եւ գրիչներուն արագ - արագ շարժելէն անմիջապէս յայտնի դարձաւ, որ շարադրութիւն գրելը եւ մանաւանդ լաւ գրելու համար մրցիլը շատ մեծ հաճոյք կը պատճառէ մասնակցողներուն:

Մրցումին մասնակցած բոլոր աշակերտները գնահատելի են: Անոնք ջանք թափած են տալու իրենց լաւագոյնը: Սակայն, ինչպէս բոլոր մրցումներուն, «ԵԿԷՔ շարադրենք»ի պարագային եւս դատական կազմը ստիպուած էր ընտրելու քանի մը հատը միայն:

«Պլտիկ - Մվտիկ»ի առաջին էջին վրայ կան յաղթողներուն անունները: Սակայն մեծ թիւով այլ մասնակցողներ եւս գրած են շատ լաւ շարադրութիւններ: Անոնք կ'արժանանան գնահատանքի: 4րդ դասարանէն գնահատանքի կ'արժանանան՝ Զատիկ Ունանեան (Ազգ. Աքսոր Գասարճեան վրժ.), Նարէ Սալորեան (Բամապալանի Ս. եւ Բ. Արսլանեան ճեմարան), Ալեք Սալիպեան (Բ.Բ.Շ.Ս.ի Կարմիրեան վրժ.), Ռիթա Սարգիսեան (Ազգ. Սուրէն Խանամիրեան վրժ.), Ռազմիկ Օգնայեան, Բարտի Մարատեան եւ Լարա Քէշիշեան (Ազգ. Ե. Մանուկեան վրժ.), Սարգիս Բալլաճեան եւ Յոլին Ծահինեան (Բայ Կաթ. Մերոպեան վրժ.):

5րդ դասարանէն գնահատանքի կ'արժանանան Գեորգ Մանուկեան եւ Քրիսթինա Գաբրիէլեան (Բայ Կաթ. Մերոպեան վրժ.):

6րդ դասարանէն գնահատանքի կ'արժանանան՝ Բայիկ Լատոյեան եւ Սարին Ծէկեան (Բամապալանի Ս. եւ Բ. Արսլանեան ճեմարան), Յակոբ Կիւլէլեան, Լարա Արապեան եւ Բերմինէ Նիւրբէթլեան (Բայ Կաթ. Մերոպեան վրժ.), Մարի Կիւրոյեան եւ Նաթալի Պոպապալեան (Ազգ. Արգարեան վրժ.), Բրակ Յակոբեան (Բայ Կաթ. Ս. Ազնէս վրժ.) եւ Ժանէթ Գապանճեան (Ազգ. Քառասնից Մանկանց վրժ.):

Իրաքանչիւր դասարանի մրցանակակիրները իրենց մրցանակները կրնան ստանալ «Ավդակ»ի խմբագրատունէն:

Մրցանակակիր շարադրութիւնները կը հրատարակենք «Պլտիկ - Մվտիկ»ի այս թիւին մէջ:

ՔԱՊԱՔԱԿԱՆ

●31 Մայիսին Լիբանանի մէջ վերըստին բացուեցաւ ամերիկեան հիւպատոսարանը, որ կը գտնուի Աուքար, ամերիկեան դեսպանատան քով: Բիւպատոսարանը փակ էր 18 տարիէ ի վեր: Միացեալ Նահանգներ մուտքի արտօնութիւն ստանալու համար լիբանանցիները կրնան հիւպատոսարան դիմել:

●Վերջերս Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը յատուկ նիստով մը վերջուց 13 տարի առաջ Իրաքի դէմ հաստատուած պատիժները:

Իրաք պատժուած էր Քուէյթի վրայ իր յարձակումին պատճառով:

●Մայիսի վերջը քանի մը զօրաւոր երկրաշարժներ ջնջեցին Ալճերիան՝ պատճառ դառնալով նիւթական եւ մարդկային հսկայական վնասներու:

●ՄԱԿի Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան համաձայն, ՍԱՐՍի համաճարակը զսպուած է:

Նոյն կազմակերպութեան համաձայն, հակառակ վերջին տուեալներուն պէտք է շարունակել շատ զգոյշ ըլլալ:


Ցարդ ՍԱՐՍէն վարակուած է շուրջ 8000 հոգի եւ մահացած՝ 700 հոգի:

●Յունիս 1ին Ֆրանսայի էվիան քաղաքին մէջ բացուեցաւ աշխարհի ճարտարարուեստի մէջ յառաջացած ութ երկիրներու (Ֆրանսա, Մ. Նահանգներ, Քանադա, Գերմանիա, Ծափոն, Իտալիա, Ռուսիա, Բրիտանիա) ժողովը: Ժողովը քննեց զանազան հարցեր, ինչպէս՝ ՍՈՏԱ, աղքատութիւն, անօթութիւն, տնտեսական եւ առեւտրական հարցեր:

●Մայիս 25ին տեղի ունեցան հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւնները:

Բայաստանի Ազգային ժողովը բաղկացած է 75 համամասնական (կուսակցութիւններու առաջարկած) եւ 56 մեծամասնական (շրջաններէ ընտրուած) պատգամաւորներէ: Նոյն օրը նաեւ տեղի ունեցաւ Բայաստանի Սահմանադրութեան բարեփոխման նախագիծին քուէարկութիւնը, որ մերժուեցաւ պէտք եղածին չափ քուէ չհաւաքելուն պատճառով:

●Մ. Նահանգներու նախագահ Պուլ Յունիսի առաջին շաբաթը Միջին Արեւելք շրջապտոյտի մը ընթացքին այցելեց արաբական կարգ մը երկիրներ, ինչպէս՝ Եգիպտոս եւ Յորդանան:



ԱՅՈՒՄՅՈՒՆ

5 ՅՈՒՆԻՍԵՐԻ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ԴԱՄԱՃՄԱՐԴԱՅԻՆ ՕՐ

5 Յունիսին ամբողջ աշխարհը կը նշէ Կենսոլորտի Դամաշխարհային օրը:

Ներկայիս կենսոլորտը ունի բազմաթիւ հարցեր, ինչպէս՝ օդի, ջուրի եւ հողի ապականում, անտառներու ոչնչացում, բնական միջոցներու (հող, ջուր, բուսականութիւն, հանքային նիւթեր, անասուններ) նուազում:

Այս հարցերուն մեծ մասին պատճառը մարդուն կողմէ բնութեան վատ ձեւով օգտագործումն է:

Կենսոլորտային Դամաշխարհային Օրուան առիթով բազմաթիւ երկիրներու մէջ կենսոլորտի պաշտպան ընկերութիւններ եւ նախարարութիւններ կը կազմակերպեն հաւաքներ: Անոնք կը մտաճեն երկրագունդին կենսոլորտը պահպանելու միջոցներուն մասին:

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՊՏՈՅՏ՝ ԿԵՆՍՈՒՈՐՏԸ ՄԱՔՈՒՐ ՊԱՌԵԼՈՎ

Ամրան տաք օրերը հասած են: Դասերն ու դպրոցական պարտականութիւնները գրեթէ աւարտած են, ու ամէն մարդ անհամբերութեամբ կը նախապատրաստուի բնութեան մէջ հաճելի պահեր անցընելու: Սակայն, փոխանակ սովորականին նման դաշտի մը մէջ, գետի մը եզերքը եւ կամ անտառին մէկ անկիւնը ամբողջ օրը անցընելու, գիտէք, թէ կրնաք բնութեան ապահով միջավայրի մէջ արկաճախնդրական ու հաճելի պահեր ապրիլ, նոր բաներ սորվիլ, աւելի լաւ ճանչնալ բնութեան գաղտնիքները, եւ, ինչո՞ւ ոչ, ձեր կարողութեան չափ օգտակար դառնալ անոր:

Բնութեան մէջ լաւ ժամանակ անցընելու, անոր ճանօթանալու եւ օգտակար դառնալու պտոյտները կը կոչուին կենսոլորտային պօսաշրջութիւն: Կենսոլորտային, որովհետեւ պտտողը նաեւ կը մտաճէ կենսոլորտին ու բնութեան մասին եւ կը ջանայ անոր վնաս չհասցնել: Զբօսաշրջութիւն, որովհետեւ ան



կը պտտի նոր վայրեր կը տեսնէ եւ ուրախ ժամանակ կ'անցընէ:

Կենսոլորտային պօսաշրջիկը հետեւեալ ձեւերով օգտակար կը դառնայ բնութեան.

Ան աշխուժօրէն կը պահպանէ բնական եւ



մշակութային արժէքները: Օրինակ, բերդի մը այցելութեան ժամանակ կենսոլորտային պօսաշրջիկը գետին ինկած գեղեցիկ քար մը հետը տուն չի տանիր եւ ոչ ալ ճառերուն վրայ իր անունը կը փորագրէ:

Կը փորձէ աւելի լաւ ճանչնալ բնութիւնը, ճառերուն, ճաղիկներուն եւ անասուններուն տեսակները: Ան այս բաները կը բացատրէ նաեւ իր շուրջիներուն:

Անհետանալու վտանգին տակ եղող անասունները եւ բոյսերը կը խնամէ, կը բազմացնէ եւ վնասը կրկին իրենց բնական միջավայրին մէջ կը դնէ:

Գիտէ, որ ամէնէն փոքրիկ միջատը նոյնիսկ կարեւոր է բնութեան պահպանումին համար: Ան վնաս չի հասցնէր անասուններուն եւ բոյսերուն:

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՋ՝ ԿԵՆՍՈՒՈՐՏԱՅԻՆ ԶԲՕՍԱՃՐՋՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐ

Լիքանանի բնութիւնը հարուստ է կենսոլորտային պօսաշրջութեան յարմար վայրերով: Բնութեան պահպանումի շրջաններու վերաճուած մայրիկ անտառները, անտառաճաճկ հովիտները, քարայրները մագլցելու յարմարութիւն ունեցող լեռները կը քաջալերեն կենսոլորտային պօսաշրջիկը, որ բնութեան ճանօթանալով ու անոր օրէնքները յարգելով՝ լաւ պտոյտներ ունենայ:

Ահաւասիկ կը ներկայացնենք քանի մը վայրեր, ուր կրնաք ուղղուիլ ձեր ընտանիքներուն հետ:

-«Լա ռեպերվ», Աֆրա.- Մնայթրա գիւղին մէջ գտնուող այս բնութեան պահպանումի շրջանը մօտ է Աֆրայի քարայրին: Ծովէն 2000 մետր բարձրութեան վրայ գտնուող այս տարածքը ունի ճառերով ճաճկուած շրջաններ, քանդակներու նմանող ժայռեր եւ բանակումի յարմար վայրեր:

-«Տը սիտրոյ ռիպորթ». հիւսիսային Լիքանանի մէջ, ճովէն մօտաւորապէս 3000 մետր բարձրութիւն ունեցող այս շրջանը մօտ է մայրիկ անտառներուն, ուր այցելուն կրնայ պտտիլ յատուկ արահետներէ անցնելով:

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ՖԻՖԱՆ որոշում տուաւ պատժելու Արաբիան, որովհետեւ երկրին կառավարութիւնը կը միջամտէր Արաբիանի ֆուտբոլի ֆետերասիոնին աշխատանքներուն:

◆2012 թուականի Ողիմպիական խաղերը ռիւ տեղի պիտի ունենան. Լոնտոն, Նիւ եմբրք, Մատրիս: Թէեւ տակաւին կանուխ է, բայց արդէն Փարիզը լուրջ պատրաստութիւններու սկսած է, որպէսզի ինը տարի ետք ինք հիւրընկալէ Ողիմպիական խաղերը: Բայց փարիզիները տակաւին շատ երկար պիտի սպասեն, որովհետեւ արդիւնքը յայտնի կը դառնայ 2005ին:

◆29 Մայիսէն 8 Յունիս տեղի ունեցաւ թեմիսի մեծագոյն մրցաշարքերէն մէկը՝ Փարիսի Ռոլան Կարոս մրցաշարքը: Աղջիկներու մրցումին ախոյեան դարձաւ Ժիւսթին Բենէն: Ան առաջին պեմօրացի է, որ մեծ մրցաշարքի մը ախոյեան կը դառնայ: Տղոց մրցումներուն սպանացի Լուան Քարլոս Ֆերերօ դարձաւ ախոյեանը: Ան եւս շահեցաւ իր առաջին մեծ մրցաշարքը:

◆41 տարեկան բրիտանացի Փեն Դատու վերջապէս կրցաւ աւարտել հիւսիսային Բեւեռի շուրջ իր արշաւը: Քալելով եւ չմշկելով ան անցաւ շուրջ 670 քմ.:

հիւսիսային բեւեռի - 45 աստիճան ցուրտին մէջ ան իր արշաւը աւարտեց միայն 64 օրէն: Ան հանդիսացաւ առաջին անձը, որ առանձին կը կատարէ նման արշաւ մը:

◆Բրիտանացի Փեն Դատու աւարտած է հիւսիսային բեւեռի շուրջ իր արշաւը: Ան քալելով, չմշկելով եւ սողալով անցած է 670 քմ. տարածութիւն: 41 տարեկան այս արկաճախնդիրը իր արշաւը աւարտած է 64 օրէն:



ԱՅՆԱԶԱՆ

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՄԱՐԴԻԿ ԴԱՍԱՆ ԷՎԵՐԵՍԹԻ ԳԱԳԱՅԸ

50 տարի առաջ՝ 29 Մայիս 1953ին մարդիկ առաջին անգամ ըլլալով հասան աշխարհի ամենէն բարձր՝ Էվերեսթի գագաթը: Լեռնագնացության այս կարեւոր թուականը տօնեցաւ Նեփալի մէջ՝ հաւաքներով եւ հանդիսութիւններով:

Առաջին երկու լեռնագնացներէն՝ նոր վելանտայի էտմընտ հիլըրիէ եւ Թենպինկ Նորկէյէ ետք 1300 հոգի հասած է աշխարհի ամենէն բարձր կէտը:

Բիմալայեան լեռնաշղթան, որուն ամենէն բարձր գագաթն է Էվերեսթը, կը գտնուի Նեփալի եւ Թիպէթի (Չինաստան) սահմանին վրայ:

ՏՈՒՐՔ՝ ՃԱՔԱՐԵՂԷՆԻ ԵՒ ԻՈՂՈՏ ՈՒՏԵԼԻՔԻ ՎՐԱՅ



Ֆինլանտայի մէջ ատամաբուծները աշխատանք կը տանին, որ շաքարեղէններու վրայ տուրք տրուի: Ինչ է արդեօք այս անգթութեան պատճառը:

Վերջին տարիներուն ֆինլանտայի մէջ մարդիկ սկսած են շատ աւելի շաքարեղէն գնել: 1995ին իւրաքանչիւր անձ տարեկան կը գներ մօտաւորապէս 8.5 քիլօ շաքարեղէն: 2001ին այս թիւը բարձրացաւ 12,5 քիլոյի:

Ատամաբուծները կ'առաջարկեն, որ շաքարեղէններու վրայ դրուած տուրքին դրամը գործածուի ակոշաններու դարմանումին համար:

ԻՈՂՈՏ ՈՒՏԵԼԻՔՆԵՐՆ ԱԼ...


Աստրալիոյ իշխանութիւնները կը մտածեն յատուկ տուրքեր դնել տապկուած գետնախնձորի, հեմպըրկըրի եւ կապային կովապուկիչներու վրայ: Պատճառը. աստրալիացիներուն մեծ մասը սկսած է չափէն աւելի գիրնալ եւ սոնքութենէ տառապիլ:

Այս տուրքերուն պատճառով իւղոտ եւ քաղցր ուտելիքներ սիրողները պիտի ստիպուին երկու անգամ մտածելու:

ՊԱՆԻՐԷ ԻՆՔՆԱՃԱՐԺ

Վերջերս, Վիրժինիա քաղաքին մէջ մրցումի ինքնաշարժներու վարորդ Թերի Լապոնթի թիւ 5 ծելոյէ ինքնաշարժին կրկնօրինակը շինած է... պանիրով: Օգտագործուած է շուրջ 1750 քիլօ դեղին չետրը պանիր:

Այս «արուեստի գործին» հեղինակն է «ուտելիք»ի քանդակագործ Ճիմ Վիթթոր:



ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ «ՔՈՆՔՐՈՐՏ» ՕՊԱՆԱԽԸ ԴԱՆՉՍԵՆԱՆ ԿՈՉՈՒԵՑԱԽ

Օդանաւերու պատմութեան մէջ կարեւոր թուական մըն է 31 Մայիս 2003ը: Այդ օր վերջին անգամ ըլլալով Ֆրանսա էջք կատարեց գերձայնային «Քոնքրոտ» օդանաւը: Նիւ Եորքէն հասած օդանաւին վայրէջքը դիտելու համար Փարիզի «Ճարլ Տը Կօլ» օդակայանը հաւաքուած էին շուրջ 15 հազար հոգի:

«Քոնքրոտ» օդանաւին թռիչքները դադրեցան ծամբորդներու թիւին նուազեցումին եւ մեծ ճախսերուն պատճառով: Այս օդանաւերէն գործածող միակ ոչ ֆրանսական ընկերութիւնը՝ «Պրիթիջ Էրուէյ» եւս հոկտեմբերին պիտի դադրեցնէ «Քոնքրոտ»ի թռիչքները:

27 տարուան ծառայութիւն ունեցող «Քոնքրոտ» իր առաջին ծամբորդները փոխադրելու սկսած էր 1976ին: Ան կը թռչէր ձայնի կրկնապատիկ արագութեամբ:

ՆԵՖԵՐԹԻՅԻ ԳԵՐԵՋՄԱՆՆ ՈՒ ՄՈՄԻԱՆ ԳՏՆՈՒԱՊԾ

Գերմանիոյ մէջ Պերլինի եգիպտական թանգարանին ամենէն արժեքաւոր գանձերէն է եգիպտոսի փարաւոններէն Ախնաթոնի կնոջ՝ Նեֆերթիթի թագուհիին արձանը: Սակայն եգիպտաբաններ (հին եգիպտոսը ուսումնասիրողներ) տակաւին գտած չեն գեղեցիկ թագուհիին կմառուած մարմինը կամ մոմիան:

Անցնող շաբաթներուն բրիտանացի հնագէտ մը յայտարարեց, թէ ինք գտած է Նեֆերթիթի գերեզմանը եւ անոր մոմիան: Եթէ այս մէկը ճիշդ է, եգիպտաբանութեան ամենէն կարեւոր յայտնաբերումը կատարուած է 1922էն ի վեր, երբ գտնուեցաւ փարաւոն Թուրան-խամոնի գերեզմանը:

Նեֆերթիթի գերեզմանը կը գտնուի թագաւորներու հովիտին մէջ, ուր կան այլ թագաւորներու գերեզմաններ եւ բուրգեր: Նեֆերթիթի մոմիային ականջը ունի օղի երկու ծակ: Ան փարաւոններու արքունիքին մէջ եղած է մէկը այն երկու կիներէն, որոնք իրաւունք ունեցած են իւրաքանչիւր ականջի երկու ոսկի օղ դնելու:

ՓՈՔՐԱԿԱՆԹԱՍԻՆ ԳԻՒՂԸ ԳՏՆՈՒԱՊԾ

Միացեալ Նահանգներու բնակիչ մը իր տան մերձակայ հողերուն մէջ գտած է կարմրամորթ հնդիկներու անհետացած գիւղի մը հետքերը: Բնագէտներու համաձայն անոնք կրնան մնացորդները ըլլալ նշանաւոր Փոքահանթասի գիւղին:



Փոքահանթաս իսկապէս գոյութիւն ունեցած է: Միացեալ Նահանգներու մէջ կը պատմուի հնդիկ իշխանուհիի մը եւ ծերմակամորթ վինուորականի մը սիրոյ պատմութիւնը: Այս պատմութիւնը ներշնչեց Տիպի ընկերութիւնը, որ 1995ին պատրաստած է «Փոքահանթաս» կենդանի գծանկարը:

Փոքահանթաս եղած է կարմրամորթ հնդիկ ղեկավարի մը աղջիկը: Ան բարեկամացած է Ճոն Սմիթի հետ, սակայն հետագային ամուսնացած է անգլիացիի մը հետ: Ան այցելած է Լոնտոն եւ ճանօթացած է Անգլիոյ թագաւորին: Նկարին մէջ, աջին, կը տեսնենք Տիպիի պատկերացուցած Փոքահանթասը: Ջախին՝ Լոնտոն, թագաւորական պալատ այցելութեան ժամանակ իսկական Փոքահանթասին դիմանկարը:



ԿԵՆՊԱՆ

ԾՈՎԱԶԻՆ

Վերջերս, Խաղաղական ովկիանոսի արեւմտեան կողմը գիտնականները յայտնաբերեցին ամենէն փոքր ծովածին: Անոր հասակը 16 մմ է:

Ծովածինու այս տեսակը հաւանաբար մինչեւ օրս չէր յայտնաբերուած, որովհետեւ ան կարգ մը այլ ծովածինու տեսակներու նման յատուկ կարողութիւն ունի գետնառիւծի նման իր գոյնը փոխելու:



Գիտնականները ճանօթ են ծովածինու 32 տեսակներու: Անոնք արեւադարձային կը կարծեն, որ գոյութիւն ունին աւելի քան 50 տեսակներ:

Ծովածին կ'ապրի տաք շրջաններու մէջ: Ան կը լողայ ուղղահայեաց դիրքով՝ շարժելով իր կռնակին լողակները: Ան իր եր-

կար պոչը կը փաթթէ բոյսերուն եւ կը սնանի անոնցմով:

Մի՛ վարմանաք, ծովածին միակ կենդանին է, որուն արուն է, որ կը յղանայ:

Ծովածին կը սկսի սերնդագործել աշնան: «Մամա» ծովածին կ'աճէ հաւկիթներ, որոնք կը բեղմնաւորուին «պապա»-ին պոչին վրայ գտնուող «գրպան»-ի մը

մէջ եւ կը մնան հոն մինչեւ իրենց ծնունդը:

Ծովածի պոչերը շատ հաւատարիմ կ'ըլլան եւ ամբողջ կեանք մը կրնան իրարու հետ անցընել: Անոնք հոգաճու են իրենց ծագերու նկատմամբ, մինչեւ որ անոնք ինքնաբաւ ըլլան:



ՍԳԻՏՈՒՄ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ՝ ՔԱՆՆԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԲԵՐՈՍՆԵՐԸ



Քաննի շարժապատկերի 56րդ փառատօնը աւարտեցաւ 25 Մայիսին: Աշխարհի մէջ շարժապատկերի ամենէն կարելոր դէպքերէն մէկը նկատուող այս փառատօնին գլխաւոր մրցանակը՝ «ոսկեայ դափնի»-ն, շնորհուեցաւ ամերիկացի բեմադրիչ կաս վան Սանթի եւ անոր «էլէֆընթ» ժապաւէնին:

Փառատօնին մասնակցեցան աշխարհի չորս կողմէն եկած մեծ թիւով ժապաւէններ: Անոնցմէ շատերուն հերոսներուն կարգին կարելի է նշել նաեւ անասունները: Նապաստակներ, ուլիներ, թիթեռնիկներ, ծովային թռչուններ, շուներ, մուկեր եւ այլ անասուններ բախտը ունեցան դառնալու բազմաթիւ ժապաւէններու դերասանները:

Ինչպէս վերը նկատեցինք, նոյնիսկ գլխաւոր մրցանակին արժանացած ժապաւէնին անունը փիղ կը նշանակէ: «էլէֆընթ» ժապաւէնը կը ներկայացնէ Միացեալ Նահանգներու մէջ պատահած դարոցական ոճի մը պատմութիւնը: Բեմադրիչին համաձայն, այս ոճի մը տան նստասենեակին մէջ գտնուող փիղ մը չնկատելու չափ կարելի է անտեսել:

Իսկ այս անասուններէն ի՞նչ եղաւ փառատօնին աստղը:

«Տոկվիլ» ժապաւէնին մէջ կայ գծանկարը Մոլլըս կոչուող շնիկի մը: Ժապաւէնին վերջաւորութեան իսկական շնիկը յանկարծ կը յայտնուի: Այս շնիկը արժանացաւ անասունի լաւագոյն խաղարկութեան մրցանակին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գծագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ առաւելագոյնը հետեւեալ չափը.

29.5 cm x 21 cm:



ՍԱՏՈՒՄ

ԾԱՔԻՐԱՆ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ



Աշխարհահռչակ երգչուհի Ծաքիրա անցեալ շաբաթ քանի մը օրուան համար ՊԵՅՐՈՒԹԻ այցելեց:

ԼՈՒՐԵՐ

Ծագումով լիբանանցի քոլումպիացի երգչուհին Լիբանան եկաւ իր ծնողքին եւ բարեկամներուն հետ:

Լիբանանի մէջ Ծաքիրա պտըտեցաւ Ծուֆի մէջ, այցելեց Պէյրութի պալատը, ապա մեկնեցաւ Զահլէ՝ իր հօր գիւղը: Ան այցելեց նաեւ Պաալպէթի հռոմէական աւերակները:

ԶԻՆԵՏԻՆ ԶԻՏԱՆ՝ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Մեծ թիւով համակիրներ ունեցող ֆութպոլիստ Զինետին Զիտանը երգիչ: Ո՛չ, սակայն նկարին մէջ վայն կը տեսնենք բեմի վրայ:

Այս աստղը պաշտող խումբ մը սպանացի երիտասարդ երգիչներ կազմած են «Զինետին» անունով ռոքի խումբ մը: Անոնք, իրենց աստղին նման, աշխարհին չորս կողմէն համակիրներ շահած են:

«Զինետին» պատրաստած է ծայնապնակ մը՝ «Թէք մի»:

Բետաքրքրականը այն է, որ 1998ին, երբ խումբը նոր կազմուեցաւ, «Զինետին» անունը առաջարկած երգիչը միայն գիտեր Զինետին Զիտանի եւ ֆութպոլի մասին: Սակայն ներկայիս անոր բոլոր անդամները դարձած են ֆութպոլի սիրահարներ:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՄԻՋ –

ԵԿԷՔ ՃԱՐԱԴՐԵՆՔ

ԻՄ ՈՒՋԱԾԻՍ ՊԷՍ

Իմ ուլածիս պէս օր մըն է: Կը քշեմ հեծանիւս եւ խանութ կը մեկնիմ: Գեղեցիկ, պայծառ եւ գարնանային տեսարաններով օր մըն է: Ծատ գեղեցիկ են լեռները, ճաղիկները իրենց անուշ եւ գոյնզգոյն տեսքով եւ ճառերը իրենց կանաչ գոյնով: Լերան ծիւղերը հալած են եւ գետի վերածուած են. այսօր արձակուրդի օր է: Կէս ժամ ետք սկսայ ընկերուհիս հետ գնդակ խաղալ: Ես շատ կը սիրեմ գնդակ խաղալ եւ հեծանիւ քշել. նաեւ կը սիրեմ վազել երբ օդը պայծառ է: Ծունս հետս վազելու կը տանիմ:

Ծատ կը սիրեմ գարնանային օրերը, որովհետեւ կրնանք գոյնզգոյն հագուստներ հագնիլ եւ բնութիւնը դիտել:

ԱՌԱՋԻՆ – ՆԱԹԱԼԻ ՍԱԳԱՐԵԱՆ
(4րդ դասարան, Ազգ. Ս. Խանամիրեան)

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Օր մը մուկն ու կատուն կ'որոշեն համաձայնիլ, քանի որ ա'լ ձանձորացր էին կռուելէ: Մուկը ըսաւ.–

Մուկ.– Կը բաւէ հետս կռուիս:

Կատու.– Դուն ալ կը բաւէ վիս չարչարես. թակարդ կը լարեմ, դուն միւս կողմէն թակարդը ոտքիս կամ պոչիս կ'անցընես, ես ալ ցաւէն օդը կը թռչիմ: Եկո՛ւր միասին համաձայնիմք:

Մուկ.– Ես կը համաձայնիմ բայց պայմաններ պիտի դնենք եւ պէտք է գործադրենք վանոնք:

Կատու.– Լա՛ւ, համաձայն եմ: Անպայման, դուն վիս պիտի չչարչարես, ես ալ՝ քեզ:

Մուկ.– Բ. պայման, ա'լ իրարու հետ պէտք չէ կռուիմք:

Կատու.– Գ. պայման, ի՞նչ ալ ըլլայ պիտի օգնենք իրարու:

Մուկ.– Դ. պայման, եւ իրարու պէտք է պաշտպանենք, օրինակ՝ եթէ ես օր մը կատուներէ պաշարուեցայ, դուն պիտի գաս եւ վիս ապատես:

Կատու.– Օր մըն ալ եթէ ես ձկնորսէն ծուկ գողնամ, դուն ալ նոյնը պիտի ընես:

Մուկ.– Լաւ չէ որ համաձայնեցանք, եկուր պտոյտ մը ընենք:

Կատու.– Ընենք, ընենք, ինչո՛ւ չէ...

Եւ այսպիսով երկու թշնամիները ընկերներ դարձան:

ԵՐԿՐՈՂԴ – ԴԱԼԱՐ ՊՈՅԱԾԵԱՆ
(4րդ դասարան, համալգայինի
Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան)

...

Իրակ գացած է հայաստան: Ան իր նոր ընկերներուն հետ պիտի խաղայ, շատ պիտի ուրախանայ, որովհետեւ գացած է իր հրաշալի, գեղեցիկ հայրենիքը: Ան պիտի պտտի հայաստանի բոլոր տեսարժան վայրերը, պիտի տեսնէ Արարատ լեռը: Խոր Վիրապը, Էջմիածինը, Անիի ակերակները, Երեւանը: Իրակ պիտի տեսնէ հայ հերոսներուն արձանները, մեր հողերը, գեղեցիկ եկեղեցիները, պարտէզները, անուշ բոյրով ճաղիկները, խոտերը: Պիտի խմէ հայաստանի մաքուր, ջինջ ջուրէն:

Իրակ հիմա շատ ուրախ է, որովհետեւ ան տեսաւ իր հայրենիքը, լսեց «Մեր հին սափ ողբանուագ լացակումած լարերը», ու դիտեց «Նայիրեան աղջիկների հեպաճկուն պարերը»:

Բոլորս ալ կ'ուզենք տեսնել մեր հայրենիքը, մենք ալ ուրախ ըլլանք մեր երկրին մէջ, խմենք հայաստանի ջուրէն, քաղենք հայաստանի գեղեցիկ ճաղիկները տեսնենք մեր հերոսներուն արձանները եւ Արարատ լեռը, հայաստանի դաշտերը, խոր Վիրապը...

ԵՐՐՈՂԴ – ԹԱԼԻՆ ԲՈՒՔԷՆԵԱՆ
(4րդ դասարան, Ազգ. Քառասնից Մանկանց վրձ.)

ՈՒՐԱՆ ԵՒ ԲՊԱՐՏ ԵՍ ԲԱՅ ԸԼԼԱԼՈՎՍ

Ծատ հպարտ եմ իմ հայրենիքովս՝ հայաստանով, նաեւ շատ հպարտ եմ հայ ըլլալովս: Այս պատճառով ես շատ կը սիրեմ հայոց պատմութիւնը, այսինքն՝ հայ ժողովուրդին կեանքը, սովորութիւնները, ասանդութիւնները...

Իմ մանկութենէս ի վեր հայոց պատմութիւն կը սորվիմ եւ ամէն

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 15

1.– Ո՞ւր յայտնաբերուեցաւ ամէնէն փոքր ճովածին:

2.– Կենսոլորտային պրօսաշրջիկը ի՞նչպէս թէ՛ կը պտտի եւ թէ՛ բնութեան հոգ կը տանի. տո՛ւր երեք ձեւ:

3.–Ո՞ր շարժապատկերը շահեցաւ Քաննի գլխաւոր մրցանակը «Ոսկեա դափնին»:

Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

Անուն – Մականուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռաձայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 15Ի ԾԱԲՈՂԸ

Բարցարան թիւ 15ի շահողը ՄԱՐԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ (8 տարեկան «Ազգային ԱբուրԳասարճեան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազգակ»էն, «Ծաղկոյեան» կեդրոն:



ՄԻՋ -

ԵԿԷՔ ՃԱՐԱԴՐԵՆՔ

տարի կը գտնեն նորություններ ու հետաքրքրական հերոսներ, որոնք վիս կը հպարտացնեն: Սկսած եմ ա՛լ անելի սիրել հայոց պատմութիւնը չորրորդ դասարանի ուսուցչուհիիս շնորհիւ, որ շատ հաճելի ձեւով կը պատմէր մեզի:

Այս ուսուցչուհին վերամուտին մեզի պատմեց Սուրբ Մեսրոպ Մաշտոցին պատմութիւնը: Եւ իրապէս կեանքս անելի ու անելի սկսաւ գեղեցկանալ եւ ուրախ դառնալ:

Իմ կարծիքովս, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը ամենամեծ հերոսն է հայոց պատմութեան, որովհետեւ առանց իրեն ես այս շարադրութիւնը պիտի չգրէի: Կ'ուզեմ ըսել՝ առանց հայերէն տառերու, առանց այբուբենին ես պիտի չկարենայի գրել:

Կեանքիս ընթացքին կ'ուզեմ անպայման ծամբորդել հայաստան եւ հոն ապրիլ: Կ'երազեմ տեսնել հայոց մեծ հերոսը՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Կը փափաքեմ անոր հետ երկար ժամանակ անցընել եւ հետը խօսիլ, թէ ինչպէ՛ս երկար տարիներու ընթացքին այդքան աշխատեցաւ եւ օր մը Աստուծա՛յ դրկուած ձեռք մը տեսաւ եւ վերջապէս իր փափաքը իրականացուց: Նաեւ կ'ուզեմ իրմէ դաս սորվիլ, ուսում ստանալ, որովհետեւ ինքն է հայերէնի առաջին ուսուցիչը եւ ինքն է հայերէնի երեսունվեց տառերուն հեղինակը:

Ամէն վերամուտին կը յիշեմ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը եւ հոկտեմբերին երկրորդ շաբաթը մեծ սրտով կը տօնեմ իր տօնը, եւ շատ երկար կը մտածեմ իր մասին: Անշուշտ չեմ մոռնար իր աշակերտները եւ հայերէնի թարգմանուած Աստուածաշունչը:

Բայց դժբախտաբար պիտի չտեսնեմ զինք հայաստանի մէջ, այլ՝ դրախտի մէջ, Աստուծոյ քով, անշուշտ եթէ օր մը դրախտ հասնիմ...:

Բնաւ չեմ մոռնար միւս հայ հերոսները եւ անոնց մասին ալ կը մտածեմ:

Մեծ շնորհակալութիւններ Սուրբ Մեսրոպ Մաշտոցին եւ հայոց պատմութեան ու հայերէնի ուսուցիչներուն:

Ճատ ուրախ եւ հպարտ եմ, որովհետեւ հայ եմ եւ որովհետեւ հայրենիքս հայաստանն է...

ԱՌԱՋԻՆ - ՃՈՂԵՐ ՅՈՎԻԱՆՆԵՍԵԱՆ
(5րդ դասարան, համազգայինի
Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան)

«ԹԵՆԻ ՏԿԱՐ, ԲԱՅՅ ՄԻՃՏ ՊԱՏՐԱՍ ԵՄ՝ ԲԱՅԱՍՏԱՆ»

Սասնոյ լեռներուն վրայ քիւրտ հովիւներ մինչեւ հիմա ալ կ'երգեն փառքը: Արճուաբերդին եւ այն քաջ հերոսին, որ կը կոչուէր Գալէ:

Գալէ պատրաստ էր ամէն ինչ ձգելու եւ թուրքերուն ու քիւրտերուն դէմ կռուիլ: Ան շղթայով կապած էր իր ոտքերը եւ փականքը դրած, իսկ բանալին՝ թուրքերուն նուիրած: Ան արնաքամ եղաւ իր հայրենիքին սիրոյն համար, եւ նահատակուեցաւ, սպասեց մինչեւ արեան վերջին կաթիլը՝ հրացանը բռնած, զլուխը՝ հրացանին քիթին վրայ, մատը՝ բլթակին, ոտքերը՝ շղթայուած սպասելով թուրք կամ քիւրտ թշնամին: Անոնք Արճիւներու Արճիւը կոչեցին պայն, իսկ լեռը՝ Արճուաբերդ:

Ահա այս հերոսն էր, որուն հետ ես ուզեցի տեսնուիլ: Ես կը փորձեմ օրինակ առնել այս քաջ հերոսներէն: Պիտի փորձեմ միշտ օգնել

իմ հայրենիքիս: Կը հաւատամ, որ օր մը պիտի երթամ իմ հայրենիքս եւ համբուրեմ մայրենի հողը, որուն կարօտը կը քաջեմ... Պիտի ընեմ իմ կարելիս, որ անկախութիւն բերեմ իմ հայրենիքիս:

Գալէ հարցուց ինձի.

«Ո՛ր կ'ուզես հանդիպիմք: Ես ըսի, - հայրենիքս՝ հայաստան երթանք, հո՛ն Արարատի եւ Մասիսի քովը: Երթանք վա՛ն ու Մուշ:

Իրեն հարցուցի. «Ո՛վ քաջ Գալէ ի՞նչ պիտի ընեմ, որ օգտակար ըլլամ հայրենիքիս, ըլլամ քեզի պէս քաջ եւ հայրենասէր: Ես հայ եմ, բայց հեռու եմ հայրենիքէս եւ տարագիր»:

Ան ըսաւ. «Ամէն բանէ անելի սիրէ քու հայրենիքդ եւ մի՛ մոռնար, որ հայաստանը ձեզի կը սպասէ:

Գալէ՛, ես ժառանգորդներն եմ հայոց բոլոր հերոսներուն: Անոնք վիս կը կանչեն, իսկ կանչեր կը լսեմ հայաստանէն, որոնք կը գոռան. «Ինչո՛ւ թա՛, հայրենի հողդ քեզ կը սպասէ»:

հայաստան, երկիր դրախտավայր:

ԵՐԿՐՈՂԴ - ԲԻԹԱ ՎԱՐԴԱՆ
(5րդ դասարան, հայ Աւետ. Ճամբան-Թաթիկեան վարժ.)

27 Օգոստոս 2009 թուականին, Սիւփրմէն կը կորսնցնէ իր ուժը եւ կը դիմէ իր ամէնէն մտերիմ ընկերոջ՝ հրակ Փափազեանին, այսինքն՝ ինձի: Ես երկար մտածելէ ետք իրեն ըսի:

«Լիթլ - Լիթլ ճորճ Պուշ»էն կը կասկածիմ:

Ան Ամերիկայի նախագահն է եւ հնարած է դեղ մը, որ կը սրսկէ օդին մէջ ու աշխարհի ամէնէն վօրաւոր մարդիկը կը կորսնցնեն իրենց ուժը»:

Ան պատասխանեց. «Ճիշդ ես: Կը տեսնե՞ս» այս ամերիկացիներուն անձնասիրութիւնը»: Այսպիսի խօսակցութիւններէ ետք կ'որոշեմք երթալ «Սաղիր սաղիր Պըն Լատէն»ի քով: Կը հասնինք ու կը տեսնենք որ ան նստած է ու «շայ հալիպ» (իրենց լեզուով) կը խմէ: Անոր կը պատմենք եղածը, ու ան կը ջղայնանայ եւ կ'երթանք կանչելու «Սաղիր - Սաղիր Սատտամ հիւսէնը»: Սատտամ նոյնպէս կը ջղայնանայ ու կը մեկնիմք վրէժ լուծելու «Լիթլ - լիթլ ճորճ Պուշէն»:

Երբ երկար ծամբորդութենէ ետք կը հասնինք Ամերիկա, անվերջ պատերազմէ մը ետք կը ձերբակալենք նախագահը ու կ'ոչնչացնենք այդ գէշ եւ թունաւոր դեղերը, որոնք կը տկարացնեն ուժեղ հերոսները: Ապա երկու շաբաթ հանգիստէ ետք կ'երթանք երեւանցի մեծ գիտնական Թորոս Թորոսեանի մօտ ու կը պահանջենք դեղ մը, որ վերադարձնէ Սիւփրմէնին ուժը: Այլ ամիս ետք պատրաստ կ'ըլլայ այդ դեղը, եւ մենք կը վերադառնանք մեր տուները:

Այլեւս Սիւփրմէն ունի իր նախկին ուժը:

Յանկարճ մէկը ձեռքս կը բռնէ ու կը շոյէ վիս: Սիւփրմէնն էր... բայց ո՛չ, եղբայրս էր, հագած իր Սիւփրմէնի հագուստը:

Այս բոլորը երազ մըն էր...

Երանի՛ իրական ըլլար: Ես արդէն հիմա արթուն եմ:

ԵՐՐՈՂԴ - ԲՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ
(4րդ դասարան, համազգայինի
Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան)



ԴՊՈՒՑԱՍԿԱ

ՄԻՋ -

ԵԿԷՔ ՃԱՐԱԴՐԵՆՔ

ԿՈՒՈՆԿ

Աշխարհի վրայ ամեն անասուն ունի իր ապրելու ձևը եւ անոնցմէ իրաբանչիւրը աշխարհի մէջ դեր մը կը կատարէ զոր ոչ մէկ այլ անասուն կրնայ ընել:

Երբեմն կը պատահի, որ մենք կարգ մը պատճառներով կ'ուզենք ըլլալ այս կամ այն ընտանի կամ վայրի անասունը: Սակայն ես կ'ուզի ըլլալ կռունկ մը, որ ծախրէր եւ թռչէր դէպի իր հայրենիքը, տեսներ վայն, կարօտ եւ խապրիկ տաներ պանդուխտներէն, Սփիւռքէն, վայն սիրող ամբողջ հայութենէն: Ես կ'ուզի բոլոր պանդուխտներուն համուզել, որ վերադառնան իրենց հողերը, վերադառնան եւ պօրացնեն իրենց մշակոյթը, անցեալին նման հպօր: Սակայն թերեւս շատ դժուար պիտի ըլլար լքել եւ երթալ հայրենիքէս անգամ մը եւս, որովհետեւ ան վիս երկրորդ անգամ ըլլալով թեւերը բաց ընդունեց, հակառակ անոր որ ես ձգած ու հեռացած էի այն վայրէն, ուր իմ նախահայրերս ծգնելով, նոյնիսկ իրենց մահը աչք առնելով, շինած էին կառոյցներ, դպրոցներ, որպէսզի բարձր եւ անձեռնմխելի պահէին մեր մշակոյթը, կրօնը եւ մեր սուրբ լեզուն: Ես հոն լքած էի նաեւ ձագուկներս եւ հեռացած էի անոնցմէ: Ես այս անգամ պիտի չկրկնէի այդ նոյն սխալը, ընդհակառակը պիտի փորձէի ճշդել եւ օգտակար դառնալ հայրենիքիս կարողութեանս չափով:

Եթէ կռունկ մը ըլլայի, պիտի զգայի վիշտ մը, որ պիտի խոցեր իմ սիրտս, որովհետեւ կ'ապրիմ օտար ափերու վրայ եւ կը զգամ, որ պէտք է վերադառնամ իմ հայրենիքս՝ հայաստան աշխարհը, իմ հայրենի հողերս եւ ձեռք բերեմ ամէն ինչ որ կը պատկանէր ինձի եւ որուն համար պէտք է պայքարիմ եւ պատրաստ ըլլամ զոհուելու:

ԱՌԱՋԻՆ - ՆՈՒՆԷ ՍԱՐԳԻՍԵԱՆ
(Ձ. դասարան, Վահան Թէրեան վարժարան)

ՓԱՓԱՔՍ

Մանկութենէս ի վեր միակ փափաքս եղած է դառնալ թռչուն մը եւ անդար թափառիլ ու թռչիլ օդին մէջ:

Երկինքը խաղաղ է, պատերազմ չկայ, աշխարհի պէս չէ, սակայն այդ չի նշանակեր, թէ եթէ թռչուն ըլլայի հեռու պիտի մնայի մահէ եւ այլ փորձանքներէ: Ժխտական կէտերէն գլխաւորն է, որ մարդիկ շատ վայրագ ձեռով պիտի վարուէին ինձի հետ: Չեմ հասկնար՝ ինչո՞ւ թռչունները զոհ կը դառնան մարդոց երբ անմեղ են: Արդե՞ժք անոնք ալ յանցանք գործած են: Երանի մարդիկ վանց առնեն այս վայրագութիւնը:

Եթէ թռչուն ըլլայի, օրս շատ հաճելի պիտի անցնէր, երբ որ հեռու մնայի այդպիսի վայրագ անասուններէ եւ մարդոցմէ:

Իմ փափաքս ոչ թէ միայն թռչուն ըլլալն է, հապա նաեւ վանոնք պահպանելն ու հեռու պահելն է փորձանքներէ:

ԵՐԿՐՈՐԴ - ՈՒՒՐԵՆ ԱԼԱՊԱՅԵԱՆ
(Ձ. դասարան, հայ Աւետ. կեդր. Բարձր. վարժարան)

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdlg_mezdlg@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ» խմբագրութեան, «ԱԶԴԱԿ», «Ճաղկոյեան» կեդրոն

ԳԻՒՏԵՐ...

Բանձարեղ գիտնականները օրական մեծ կամ պզտիկ գիւտեր կը հնարեն, օգնելու համար ժողովուրդին եւ կամ իրենց անձնական շահերուն համար: Ես ալ, իբրեւ գիտնական, ամենակարեւոր հարցերէն մէկուն՝ անբուժելի հիւանդութիւններուն, պիտի փորձէի դեղեր կամ սսեղներ գտնել:

Անշուշտ կան շատ տեսակի եւ բազմաթիւ հիւանդութիւններ: Բայց ես կ'ուզի, »ՍԱՐՍ« անունով նոր եւ փոխանցիկ հիւանդութեան դեղը գտնել: ՍԱՐՍը եկած է ճովային թռչուններէն, հաւանաբար կարապներէն, փոխանցուած է շուններուն, որոնցմէ՝ մարդոց: ՍԱՐՍը տարածուած է Չինաստանի, Ճափոնի, Քանադայի, եւ այլ երկիրներու մէջ: Այս հիւանդութիւնը պատճառ դարձաւ միլիոնաւոր անմեղ եւ երիտասարդ մարդոց մահուան: Սակայն բժիշկներ կան գիտնականներ նկատած են, թէ միայն երիտասարդներուն մէջ է որ ՍԱՐՍը կը տարածուի, եւ ոչ՝ փոքրերուն կամ ճերերուն: Դժուար է այս ժահրին-դեղը գտնել, քանի որ ան ամէն անձի մարմինին մէջ տարբեր ձեւեր կը ստանայ:

Երբ գտած եմ ճարը, օգտակար դարձած եմ բոլոր ժողովուրդներու, եւ բոլորը վայն օգտագործած են, կը փորձեն այլ հիւանդութիւններու ճարը գտնել: Որեւէ մէկ գիտ ընելով, նախ՝ պիտի փափաքէի երիտասարդները բուժել եւ անոնց օգտակար ըլլալ, որովհետեւ անոնք են ազգի ապագան եւ անոնց շնորհիւ է, որ սերունդները պիտի բազմանան:

Այս բոլոր երազանքներս յուսամ կ'իրականանան եւ նոր հարցեր չեն ծագիր, ու ամբողջ աշխարհը կ'ապրի համերաշխ, առողջ ու հանգիստ կեանք մը:

ԵՐՐՈՐԴ - ՆԱԹԱՅԱ ԱՐԱՊ ՊԱՂՉԵՏԵԱՆ
(Ձ. դասարան, համազգայինի Մ. եւ հ. Արսլանեան ճեմարան)

ԱՄՐԱՆ ԱՐՉԱԿՈՒԴԴԻՆ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԻՆ ԼԱՒԱԳՈՅՆ ԲԱՐԵԿԱՍԷ ՀԱՅ ԳԻՐԲԸ

ԳԻՐԵՐՈՒ ՊԱՐՏԵՂԸ

ՅԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ ԵՒ ՆԱԽԱԿԵՐԹԱՐԱՆԻ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ՄԱՍԻՆ ՉԵՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՁԱՐԳԱՑՈՒՅԵՆ ԱՊԱՇՏՈՒՄԸ «ԻՆՉ Է ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ» ԳԻՐԸ

ԻՆՉ Է ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ

Կարելի է ստանալ հետեւեալ գրախանութներէն՝ Համազգային - Նարեկացի - Ոսկեղար եւ Կիլիկիա (Հալեպ)